

Հետեւեալ տապանագիրն ընդօրինակած է ՏՐ.
Վ. Թորգոմեան, որ նոյնն ինձ հաղորդեց.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ: ԳԼՄԲԱՐԱՆԻ
ՋԱՔԿԻԱՍ ՎՐԴԱՊԻ: ՆՈՐՈԳ
ՈՂ: ՍԲ ԿՐԱՊԻ ԵԿԵՂԵՑՈՅՆ
ՆՈՐ. ՄԱՀԼԱՅԻ. ՎԱՂՋԱՆ
ԵՑԱԻ. ՄԵՐՍ
ԹՎԻՆ. Ո. Կ. Զ.

Այս երեք պարագլուխներու մահուամբը
չվերջացաւ Կ.Պոլսոյ Պատրիարքական աթոռը
ձեռք բերելու ճիգն կաթողիկէ Հայերու կող-
մանէ, այլ շարունակուեցաւ ասկէ վերջն ալ
անմիջապէս, եւ ժամանակ մ'ընդհատելէն ետեւ՝
1700էն մինչեւ 1714 միջոցներուն եւ 1787ին
կաթողիկէ Հայերը նորանոր փորձեր ըրին, որոնց
սակայն հետեւութիւնը եւ հանգամանքները
շատ եղերական եղան իրենց համար: Ասոնց
վրայ ուրիշ առթիւ: